Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 466 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ռինդ գյուղի երեխաների ժամանցը ապահովելու համար՝ մանկապարտեզի բակում մանկական խաղահրապարակի սարքավորումների տեղադրում. 2) Հայաստանի Հանրապետության մի քանի համայնքներում էներգետիկ ծախսերի նվազեցման նպատակով՝ արևային կայանների տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ռալֆ Յիրիկյան (բնակության հասցե՝ քաղ. Երևան, Նորքի Այգիներ 251/7, նույնականացման քարտ՝ 013284930, տրված՝ 09.11.2022 թվականին, 010-ի կողմից)
4.	Ծրագիրը կատարողը	Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ (հասցե՝ քաղ. Երևան, Խանջյան 47/1, բնակարան 14, ՀՎՀՀ՝ 02565835)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի և Եղեգնաձոր համայնքներ, Սյունիքի մարզի Կապան համայնք, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք, Տավուշի մարզի Իջևան համայնք, Լոռու մարզի Ալավերդի համայնք, բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	17,960,000 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ռինդ գյուղ և Եղեգնաձոր համայնքի Մալիշկա գյուղ, Սյունիքի մարզի Կապան համայնքի Ճակատեն գյուղ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք, Տավուշի մարզի Իջևան համայնքի Ծաղկավան գյուղ, Լոռու մարզի Ալավերդի համայնքի Քարկոփ գյուղ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ում մանկական խաղահրապարակի սարքավորումների տեղադրում՝ 2,960,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում. 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ճակատեն գյուղի վարչական շենքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 3,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում. 3) «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 3,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում. 4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի սպասարկման ՊՈԱԿ-ի տարածքում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 3,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև

		2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում. 5) «ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Ներքին Ծաղկավան բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 3,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում. 6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Շնող համայնքի Հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Քարկոփի մասնաճյուղում արևային ֆոտովոլտային կայանի կառուցում՝ 3,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հուլիսի 10-ից մինչև 2025 թվականի հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Մանկական խաղահրապարակի սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,960,000 դրամ. 2) Արևային կայանների ձեռքբերման կամ ներմուծման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետների աշխատակազմեր, այլ կազմակերպություններ և իրավաբանական անձինք

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվությունների ներկայացում Ռալֆ Յիրիկյանին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ